ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/45

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2017թ. թիվ 03/26-3/15581-17 գրությամբ «Նակոյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.08.2017թ. թիվ ԴՎԱ/2764 գրության հիման վրա, 25.08.2017թ. թիվ 03/26-3/15581-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Նակոյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Նակոյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Նակոյլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր ներկայությունը, ինչպես նաև իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ «Նակոյլ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը, որպեսզի վերջինս ներկայացնի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Ընկերության կողմից նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո «Նակոյլ» ՍՊԸ-ն ծանուցվել է, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և տրվել է շտկման հնարավորություն:

Ընկերության տնօրենը միաժամանակ հայտնել է, որ գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով պարզաբանել հետևյալը. «Ծանուցման մեջ նշված է եղել բացակայում է տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը, ինչպես հասկանալ նշվածը», սակայն Պատվիրատուի կողմից պարզաբանում չստանալով՝ «Նակոյլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է բավարարող տեխնիկական բնութագիր, որտեղ մատակարարվող ապրանքների ընդհանրացված ցուցանիշները փախարինվել են արտադրողի կողմից տրված կոնկրետ անձնագրերով ներկայացված ցուցանիշներով:

Ամփոփելով Ընկերության տնօրենը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից այլ ծանուցումներ և առարկություններ չստանալով՝ Ընթացակարգի 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, ներկայացրած փաստաթղթերը համարել է համապատասխանող:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.08.2017թ. թիվ ԴՎԱ/2764 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Նակոյլ» ՍՊԸ-ն (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Նակոյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժինների մասով ապրանքների տեխնիկական բնութագրերի քննարկման արդյունքում պարզվել է, որ նրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և համարժեք չեն դրան: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Նակոյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, սակայն համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության դրանք չեն համապատասխանել հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մերժել «Նակոյլ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են 18.08.2017թ. թիվ ԴՎԱ/2764 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/45 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/45 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպառազինությանն օժանդակ ապրանքանյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Նակոյլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Նակոյլ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

3. Պատվիրատուն 25.05.2017թ. «Նակոյլ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, ուստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փաստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

4. Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ «Նակոյլ» ՍՊԸ-ն 26.05.2017թ. Պատվիրատուին է ներկայացրել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Պատվիրատուն 07.06.2017թ. Ընկերության ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ «Նակոյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունները: Շտկված տարբերակը անհրաժեշտ է ուղարկել t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փաստին:

6. «Նակոյլ» ՍՊԸ-ն 07.06.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ստացել է ոչ ավտոմատ ծանուցում, որտեղ նշված է, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը և խնդրել է, որպեսզի Պատվիրատուն պարզաբանի ինչպես հասկանալ նշվածը կամ հարցը պարզելու համար տալ հեռախոսահամար:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նակոյլ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են, բայց փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը և << կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ Ընկերությանը հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Նակոյլ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհամապատասխանության շտկումները, ինչպես նաև շտկման հետ միասին ներկայացրելլ է այլ տեխնիկական բնութագիր, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ որով Ընկերության կողմից ներկայացվածը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մերժել է «Նակոյլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

5. **<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>**

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 25.08.2017թ. թիվ 03/26-3/15581-17 գրությունը, << պաշտպանության նախարարության 18.08.2017թ. թիվ ԴՎԱ/2764 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ

նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում ***հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական***

էլեկտրոնային փոստին է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև *ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:*

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.1.3 կետի համաձայն՝ *առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝*

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպառազինությանն օժանդակ ապրանքանյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Նակոյլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Նակոյլ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

Պատվիրատուն 25.05.2017թ. «Նակոյլ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, ուստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փաստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ «Նակոյլ» ՍՊԸ-ն 26.05.2017թ. Պատվիրատուին է ներկայացրել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

Պատվիրատուն 07.06.2017թ. Ընկերության ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ «Նակոյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Շտկված տարբերակը անհրաժեշտ է ուղարկել t.baghdasaryan@mil.am էլեկտրոնային փաստին:

«Նակոյլ» ՍՊԸ-ն 07.06.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ստացել է ոչ ավտոմատ ծանուցում, որտեղ նշված է, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը և խնդրել է, որպեսզի Պատվիրատուն պարզաբանի ինչպես հասկանալ նշվածը կամ հարցը պարզելու համար տալ հեռախոսահամար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նակոյլ» ՍՊԸ-ի համապատասխանությունը

հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ Ընկերությանը հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Նակոյլ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհամապատասխանության շտկումները, ինչպես նաև շտկման հետ միասին ներկայացրել է այլ տեխնիկական բնութագիր, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ որով Ընկերության կողմից ներկայացվածը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մերժել է «Նակոյլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

01.09.2017թ. կայացած ՍՑ-ԱՄ-2017/45 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված Խորհրդի նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Պատվիրատուն 07.06.2017թ. «Նակոյլ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ՝ հստակ չի ձևակերպել թե Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ինչը պետք է շտկի, մասնավորապես՝ Պատվիրատուն չի նշել, որ ապրանքների արտադրման տարեթիվը պետք է լինի 2017թ., որից հետո Ընկերությունը, չհասկանալով թե ինչը պետք է շտկի, 07.06.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ստացել է ոչ ավտոմատ ծանուցում, որտեղ նշված է, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ բացակայում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթությունը և խնդրել է, որպեսզի Պատվիրատուն պարզաբանի ինչպես հասկանալ նշվածը, սակայն Պատվիրատուն չի արձագանքել Ընկերության գրությանը, որի հետևանքով «Նակոյլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ հստակ չիմանալով թե ինչը պետք է շտկի, Պատվիրատուին ներկայացրել է մի նոր փաստաթուղթ՝ նոր տեխնիկական պայմաններ,

սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ որով Ընկերության կողմից ներկայացված նոր տեխնիկական պայմանները չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մերժել է «Նակօյլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի թիվ 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

Այսպես, Կարգի 51-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից*** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ***ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Խորհուրդն, ուսումնասիրելով «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, գտնում է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/58» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը Պատվիրատուի ծանուցումից հստակ չի հասկացել թե ինչը պետք է շտկի և քանի որ Պատվիրատուն չի արձագանքել Ընկերության 07.06.2017թ. գրությամբ ներկայացված պարզաբանման խնդրանքին, ուստի

Ընկերությունը սահմանված ժամկետում որպես շտկում ներկայացրել է նոր տեխնիկական պայմաններ, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանն այս հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2017թ. թիվ 03/26-3/15581-17 գրությամբ «Նակոյլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02237916) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ